ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 114-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղ.Հայկասար Հմայակի Քառյանի դիմումը, սեփականության իրավունքի N 816466 վկայականը՝ տրված 29.04.2002թ. և հողօգտագործման մասնագետի առաջարկությունը՝
Որոշում եմ.

1.Քաղ.Հայկասար Հմայակի Քառյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի,Թումանյան համայնքի Ահնիձոր գյուղի (ծածկագիր՝06-012-005-000004-001) բնակելի տանը՝ մակերեսի չափը՝ 58,1 քմ և բնակավայրերի տնամերձ հողամասին՝ մակերեսի չափը՝ 0,235 հա տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Ահնիձոր,4-րդ փողոց, 1/1 բնակելի տուն) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 115-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2 մասով և հաշվի առնելով, որ Լոռու մարզի Թումանյան միավորված համայնքում 2021 թվականի դեկտեմբերի 5-ին անցկացվել են համայնքի ավագանու ընտրություններ և ընտրությունների արդյունքները պաշտոնական հրապարակվել են 12.12.2021թվականին՝
Ո ր ո շ ու մ ե մ.

1.2021 թվականի դեկտեմբերի 17-ից Թումանյան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Տիգրան Մխիթարյանի լիազորությունները համարել դադարած և նրան ազատել համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնից:

2.ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել և վճարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. դեկտեմբերի 16
ք.Թումանյան